ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Իրանի բաժնի վարիչ
Էլ. փոստ՝ iskandaryan@sci.am
DOI: 10.56813/2953-786X-2023.3-83

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԻՐԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ[39]

Ներածություն

Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները, տարածաշրջանի և արտատարածաշրջանային երկրների շահերի համընկնումները և հակասությունները՝ կիզակետում պահելով Արցախի և ՀՀ անվտանգության խնդիրները:

Աշխատանքում ներկայացվում է 44-օրյա պատերազմի ժամանակ Ադրբեջանին ցուցաբերված Իսրայելի ռազմական աջակցությունը, որը հեղինակի կարծիքով իրականացվել էր հիմնականում Իրանի սահմաններին մոտենալու Իսրայելի անհագ ցանկությամբ: Առկա փաստերից գալիս ենք եզրակացության, որ դա հաջողվել է Իսրայելին, ինչն էլ վերջին շրջանում, Իրան-Ադրբեջան հարաբերություններում խիստ լարվածության պատճառ է դարձել:

44-օրյա պատերազմի ժամանակ Իրանը փորձել է պահել հավասարակշռությունը, բայց միևնույն ժամանակ նրա գլխավոր խնդիրն էր պահել իր դիրքերը Կովկասում:

---

[39] Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

Ուշագրավ է նաև պատերազմից հետո իրանական դիվանագիտության ակտիվացումը: Նոր իրադրությունում Իրանը տարբեր առաջարկներով փորձում էր մասնակից դառնալ նոր ստեղծվող իրավիճակին:

Պատերազմից հետո ակնհայտ էր, որ Կովկասում էլ ավելի է մեծանալու Թուրքիայի ազդեցությունը, տարածաշրջան էին բերվել Ադրբեջանի կողմից վարձկաններ և առաջին անգամ իսրայելական հետախուզական ծառայության ներկայացուցիչներ, ինչը հակասում է Իրանի ազգային անվտանգությանը, որի մասին նա մի քանի անգամ բարձրաձայնել է:

Հարաբերական խաղաղության շրջան

Արցախյան առաջին պատերազմից ու հայկական կողմի հաղթանակից հետո, ըստ էության՝ հայ-ադրբեջանական սահմանին հարաբերական խաղաղություն էր տիրում: Երբեմն գրանցվում էին սահմանային լարվածություններ, սակայն դրանք հնարավոր էր լինում կանխել սեփական ուժերի միջոցով: Ուշագրավ է, որ Վիքիլիքսի լույս սփռած փաստատեղթերից էլ պարզ է դառնում, որ անգամ պարտված Ադրբեջանը բացարձակապես պատրաստ չէր արցախյան խնդրում որևէ զիջման գնալ, բացի իր տարածքում Արցախին ինքնավարություն տալուց[40], ինչը Արցախը մինչ այդ էլ ունեցել է Խորհրդային Ադրբեջանի կազմում և ենթարկվել տարատեսակ խտրական վերաբերմունքի անգամ ԽՍՀՄ

[40] AZERBAIJAN/ARMENIA/MIL/CT President Ilham Aliyev: Azerbaijan is ready to grant highest possible autonomy to people who live in Nagorno-Karabakh and who will return to Nagorno-Karabakh, Released on 2013-02-19, https://wikileaks.org/gifiles/docs/30/3023032_-os-azerbaijan-armenia-mil-ct-president-ilham-aliyev.html.

կազմում: Ակնհայտ էր, որ Ադրբեջանը որդեգրեց այլ մարտավարություն. հզորացնել տնտեսությունը ի հաշիվ սեփական նավթագազային հանածոների, Թուրքիայի հետ շարունակելով շրջափակման մեջ պահել Հայաստանին, վիժեցնել յուրաքանչյուր մեծ ու փոքր ծրագիր, որին մասնակից կարող էր դառնալ Հայաստանը: Սրա արդյունքում սակավ բնական ռեսուրսներ ունեցող երկիրը չէր կարողանալու զարգացնել տնտեսությունը և տարիներն աշխատելու էին Հայաստանի դեմ: Այս ամենին էր գումարվում նաև Հայաստանի իշխանությունների, ըստ էության, ոչ ճիշտ կառավարումը, կոռուպցիայի մակարդակի բարձրացումը, բանակաշինության մեջ ոչ բավարար չափով բարեփոխումներ իրականացնելը:

Միևնույն ժամանակ, ի տարբերություն Ադրբեջանին ցուցաբերած Թուրքիայի միանշանակ աջակցության, Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը տարածաշրջանում միշտ էլ փորձել է բալանսավորողի դեր կատարել և աջակցել է թե Հայաստանին, թե Ադրբեջանին՝ այդպիսով փորձելով Կովկասը հնարավորինս պահել իր լիիրավ ազդեցության տակ:

ՌԴ-ն «Գույք պարտքի դիմաց» ծրագրով Հայաստանից ձեռք բերեց Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ռազմավարական օբյեկտները և յուրաքանչյուր ռազմավարական ծրագիր, որին պետք է մաս կազմեր Հայաստանը, փաստացի պետք է համաձայնեցվեր նաև ՌԴ-ի հետ: Իրականում Հայաստանը այս ամենին թերևս համաձայնվել էր մեկ նպատակով՝ որպեսզի երկրի անվտանգությանը սպառնալու պարագայում ռազմավարական դաշնակիցն ամբողջությամբ կատարի իր պարտականությունները: Հայաստանի անվտանգության թիվ

մեկ երաշխավորը, ըստ էության ՌԴ-ն է, որի հետ կնքվել է ռազմավարական դաշինք:

ԽՍՀՄ փլուզումից հետո Կովկասում իրենց դիրքերը ամրացնելու ուղղությամբ տարածաշրջանի մյուս ազդեցիկ պետությունները՝ թե՛ Թուրքիան, թե՛ Իրանը, իրականացրել են տարբեր աստիճանի աշխատանքներ: ԽՍՀՄ փլուզումից հետո այս երկրների համար բացվել էր մի իրական հնարավորություն ազդեցություն ունենալ և կրկին ներթափանցել Կովկաս: Այստեղ ակնհայտ կերպով բախվում էին Թուրքիայի և Իրանի շահերը Կովկասում, քանզի թուրք-ադրբեջանական միացյալ ծրագրերը հաճախ հակադրվում էին իրանական հետաքրքրություններին: Ուշագրավ է, որ թեպետ Հայաստանը ռազմավարական դաշինք չուներ, և այսօր էլ չունի, Իրանի հետ կնքած, սակայն մեր շահերի համընկնման շնորհիվ Իրանը դառնում է Հայաստանի բնական դաշնակիցը: Ի՞նչ ի նկատի ունենք՝ բնական դաշնակից ասելով. այսօր առավել քան երբևէ ցայտուն երևում է Հայաստանի և Իրանի շահերի համընկնումը տարածաշրջանային մի շարք հարցերի հետ կապված, որոնք հաճախ սերտորեն կապվում են յուրաքանչյուրի ազգային անվտանգութիան հետ: Սակայն, արդարության համար պետք է նշել, որ այս մասին բավական լավ գիտակցում էին թե՛ Իրանում, թե՛ Հայաստանում 30 տարվա ընթացքում էլ, բայց դա չէր ստիպել կողմերին անել առավելագույնը: Իրանն այս տարիների ընթացքում առերևույթ փորձել է բալանսավորված քաղաքականություն իրականացնել Կովկասում, հիմնականում հավասար մոտեցումներ ցուցաբերելով թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին, սակայն ի տարբերություն ՌԴ-ի նմանատիպ մոտեցմանը՝ Ադրբեջանը դա չէր ցանկանում տեսնել Իրանից: Հղում անելով երկու երկրների իսլամի շիա ճյուղին պատկանելուն՝

Ադրբեջանն ակնկալում էր, որ Իրանը ևս Թուրքիայի պես պետք է մասնակցի Հայաստանի շրջափակմանը և ստիպի Հայաստանին իր հաղթանակից հետո դիվանագիտական ոլորտում զիջումների գնալ: Ավելին, Արցախյան առաջին պատերազմի ժամանակ Իրանը երբեմն որոշակի աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին, որպեսզի կարողանա իր տարածքում բնակվող թյուրքախոս իրանցիներին փոքր-ինչ հանդարտեցնի, դրանով կանխելով իր տարածքում ցնցումները: Այդ մասին «Սահար» հեռուստատեսությանը տված հարցազրույցում խոսել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատար գեներալ Մոհսեն Ռեզային, նշելով. «Անձամբ ես հրաման եմ տվել, որ ադրբեջանական բանակը պատշաճ կերպով զինվի և ստանա անհրաժեշտ պատրաստվածություն: Ղարաբաղյան պատերազմում շատ իրանցիներ են զոհվել: Բացի վիրավորներից, որոնք տեղափոխվել են (Իրան), իրանցի նահատակներից շատերը թաղված են Բաքվում»[41]:

Սակայն, այսպիսի օգնություններից զատ Իրանը չմիացավ թուրք-ադրբեջանական շրջափակմանը, բայց, միևնույն ժամանակ Հայաստանին իրական հնարավորություն էլ չտրվեց զարգացնելու իր տնտեսությունը, որից հետո Հայաստանը կունենար գումարներ՝ ձեռք բերելու արդիական զինատեսակներ և կկարողանար ինքնուրույնաբար դիմակայել Ադրբեջանի սանձազերծություններին:

Անցյալ տասնամյակների ընթացքում՝ ներքին և արտաքին հանգամանքներով պայմանավորված, Հայաստանի և Իրանի միջև ապրանքաշրջանառությունը կայուն զարգացում չի ունեցել, 2021 թ. Հայաստան-Իրան

[41] Иранский генерал признался, что ВС Ирана помогали Азербайджану в годы карабахской войны, 6 марта, 2013, https://regnum.ru/news/1633013.

առևտրաշրջանառությունը հատեց ընդամենը 500 մլն դոլարի շեմը[42]: 2023 թ. հուլիսի 24-ին ԻԻՀ արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլահյանը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ հանդիպումից հետո, թվիթերյան իր անձնական օգտահաշվում նշեց, որ շուտով Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը կհասցվի 3 միլիարդ դոլարի[43]: Սակայն ներմուծման և արտահանման թվերը հավասար չեն և ավելի շատ ապրանք է բերվում Իրանից Հայաստան, քան հակառակը, այն դեպքում, որ հայկական շուկան 2,5 մլն է, իսկ իրանականը՝ 87 մլն: Թեպետ Հայաստան-Իրան հարաբերություններին միշտ տրվել են «հատուկ հարաբերություններ», «առանձնահատուկ հարաբերություններ», «բարեկամ երկիր» որակումներ, սակայն այդպես էլ մեր երկու երկրները չկարողացան կյանքի կոչել ինչպես մեծ ծրագրեր (բացառությամբ «գազ-էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրից), այնպես էլ որոշ ապրանքների նկատմամբ 0% դրույքաչափ կիրառելու նախաձեռնությունը: Թեպետ ԻԻՀ առևտրի փոխնախարար Մ. Խոսրովթաջը 2001 թ. առաջարկել էր Հայաստանից և Իրանից որոշակի ապրանք անունների համար 0% դրույքաչափ կիրառելը, սակայն հետագայում իրանական կողմը փաստեց, որ հաշվի առնելով ներքին արտադրողի պաշտպանության սկզբունքը՝ չեն կարող թույլ տալ անգամ 10 ապրանքի նկատմամբ 0% դրույքաչափի կիրառում[44]:

---

[42] 30 years of diplomatic ties: Iran is Armenia's 3rd top trading partner, 10 February 2022, https://armenpress.am/eng/news/1075181.html.

[43] @Amirabdolahian, 24.06.2023.

[44] Հաշվետվություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից գլխավորած պատվիրակության 2002թ. հունիսի 24-27-ը Թեհրանի կատարած գործուղման մասին, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 86, էջ 123:

Արձանագրենք, ևս մեկ անգամ, որ 2000-ականների սկզբներին Հայաստանը շրջափակված էր թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից, նորանկախ Հայաստանի ղեկավարությունը հաճախ վարում էր անհեռատես քաղաքականություն, և Հայաստանի հետ շահերի համընկնող երկրներն էլ այն աստիճան չէին աջակցում Հայաստանին, ինչ չափով աջակցում էր Թուրքիան Ադրբեջանին: Ըստ էության, տարածաշրջանում ստեղծվեց ուժերի մի կենտրոնացում, որտեղ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային երկրների շահերի կուտակում արձանագրվեց:

Մեծ խաղ փոքր Արցախի շուրջ

Վերջին տաս տարիների ընթացքում, ըստ էության խախտվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև փոխադարձ զսպման բալանսը: 2020 թ. Ադրբեջանը որոշեց, որ ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններն ամբողջովին ձեռնտու են կյանքի կոչելու իր ծրագրերը և ըստ էության համաշխարհային հանրության լռության ներքո սկսեց պատերազմել Արցախում՝ ստանալով Թուրքիայի, Իսրայելի բացահայտ աջակցությունը[45]:

Ինչպես ներկայացնում է իսրայելական «Հաարեց» պարբերականը՝ 2016 թվականից Իսրայելը «Հերմես 900» անօդաչու թռչող սարքեր ու «Լոռա» տիպի բալիստիկ հրթիռներ է մատակարարել Ադրբեջանին: 2016 թ. Բենյամին Նաթանյահուի Բաքու կատարած այցի ժամանակ Ալիևը բացահայտ ասաց, որ երկու երկրների միջև կնքվել է 5 մլրդ

---

[45] A. Borshchevskaya, A. J. Tabler, Iran's Tensions with Azerbaijan Point to Broader Shifts in the South Caucasus, March 31, 2023, https://www.washingtoninstitute.org/policy-analysis/irans-tensions-azerbaijan-point-broader-shifts-south-caucasus.

դոլարի «պաշտպանական տեխնիկա» գնելու պայմանագիր: 2019-2020 թթ. Իսրայելից առաքվել են առավել ժամանակակից «Սփայք» տիպի հրթիռներ: Իսրայելական զինատեսակների համակարգերի հետ մեկտեղ, Թուրքիան՝ Ադրբեջանի դաշնակիցը, մատակարարել է իր «Bayraktar TB2» անօդաչու սարքերը, որոնք մեծ դեր են խաղացել հայկական թիրախները ոչնչացնելու գործում: Այս բոլոր զինտեսակները Իսրայելից դուրս գալով հատել են Թուրքիայի սահմանը մտել Վրաստան, այնտեղից Ադրբեջան (քարտեզը առկա է նյութում)[46]:

Իսկ Հայաստանին ռազմական աջակցություն անգամ չէր կարողանում ցուցաբերել ռազմավարական դաշնակից Ռուսաստանը, քանզի Վրաստանը փակեց իր օդային սահմանը ՌԴ-ի առջև, և միակ ճանապարհը մնաց Կասպից ծովով և Իրանի տարածքով զենք մատակարարելը: Սակայն այս ուղին ևս արագ փակվեց, քանզի Իրանի տարածքի թյուրքախոս իրանցիները Ադրբեջանի և Թուրքիայի հրահրմամբ բողոքի ցույցեր իրականացրեցին և կարողացան հասնել Նորդուզի անցակետի փակմանը: Պատերազմի ժամանակ, ի տարբերություն Թուրքիայի, որն ամեն կերպ աջակցում էր Ադրբեջանին, Իրանը առերևույթ փորձեց չեզոքություն պահել: Իսկ արդեն պատերազմի ավարտից հետո փորձեց նախաձեռնող դիվանագիտություն իրականացնել, առաջարկելով իր ծառայությունները երկու երկրներին էլ, քանզի ակնհայտ էր որ Մինսկի խումբը չի կարողանում իրացնել իր գործառույթները: Իրանը առաջ

[46] A. Scharf, O. Yaron, Haaretz, 92 Flights From Israeli Base Reveal Arms Exports to Azerbaijan, Mar 6, 2023, https://www.haaretz.com/israel-news/security-aviation/2023-03-06/ty-article-magazine/.premium/92-flights-from-israeli-base-reveal-arms-exports-to-azerbaijan/00000185-fd3d-d96e-adef-ff3dc38e0000?v=1690451030751.

քաշեց «3+3 ծրագիրը», որով նա ևս մասնակից կդառնար Արցախյան խնդրի խաղաղ կարգավորման գործընթացին, այսպիսով ամրապնդվելով Կովկասում: Ակնայտ էր, որ Իրանի դիրքերը թուլացել էին Կովկասում և էապես մեծացել էր Թուրքիայինը, ինչը չէր կարող չմտահոգել Թեհրանին, սակայն իրանական ակտիվ ջանքերը բախվում էին Ադրբեջանի մերժմանը: Ակնհայտ էր, որ «3+3 ծրագիրը» չէր բխում ՀՀ շահերից, միևնույն ժամանակ «3+3 ձևաչափին» մասնակցելուց հրաժարվեց Վրաստանը և ըստ էության՝ ծրագիրը կյանքի չկոչվեց: Կովկասում հավասարկշռութուն պահելու Իրանի բոլոր ջանքերը փոշիացան, քանզի Ադրբեջանը բացահայտ ցույց էր տալիս, որ Իրանի որևէ աջակցության կարիքը չունի: Ավելին, իսրայելական «Հաարեց» պարբերականի տեղեկությամբ Իսրայելը ոչ միայն լայնածավալ օգնություն ցուցաբերեց Ադրբեջանին ողջ պատերազմի ընթացքում, այլ նաև կարողացավ ձեռք բերել Իրանի հյուսիսային շրջանները մշտադիտարկելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Իրանի դեմ գործողություններ ծավալելու հնարավորություն: Համաձայն պարբերականի՝ Ադրբեջանի հարավային հատվածներում որոշ տարածքներ էլ հանձնվեցին Իսրայելի հատուկ ծառայություններին, նույնիսկ կառուցվեց օդանավակայան Իսրայելին աջակցելու համար, եթե վերջինս որոշի հարձակվել իրանական միջուկային օբյեկտների վրա[47]:

Ըստ էության՝ 2020 թ. հետո Ադրբեջանն ընդգծված հակահիրանական, և թուրքամետ ու իսրայելամետ քայլեր է

[47] A. Scharf, O. Yaron, Haaretz, 92 Flights From Israeli Base Reveal Arms Exports to Azerbaijan, Mar 6, 2023, https://www.haaretz.com/israel-news/security-aviation/2023-03-06/ty-article-magazine/.premium/92-flights-from-israeli-base-reveal-arms-exports-to-azerbaijan/00000185-fd3d-d96e-adef-ff3dc38e0000.

իրականացրել, որը բնականաբար անհանգստացնում է Իրանին, քանզի Կովկասում փաստացի միակ երկիրը, որը ջանում է ջերմ և ակտիվ հարաբերութկուններ պահել Իրանի հետ թուլացած Հայաստանն է, որի տարածքային ամբողջականության նկատմամբ արդեն բացահայտ հավակնություններ ունի Ադրբեջանը:

Իրանը մի քանի անգամ նշել է իր կարմիր գծերի մասին, որով արձանագրել է, որ թույլ չի տա իր սահմանի փոփոխությունը Հայաստանի հետ: Ամենաբարձր մակարդակով հայտարարություն արեց ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին 2022 թ. հուլիսին, ինչպես Թուրքիայի նախագահ Ռեջեպ Թայիպ Էրդողանի[48], այնպես էլ ՀՀ ռազմավարական դաշնակից ՌԴ նախագահ Վ. Պուտինի[49] հետ հանդիպման ժամանակ: Ըստ իս, առնվազը տարօրինակ էր, որ Իրանի ղեկավարը ՀՀ ռազմավարական դաշնակցին իրազեկում էր, որ Իրանը թույլ չի տա ՀՀ-ի հետ իր պատմական սահմանի փոփոխություն: Այստեղից եզրակացնում ենք, որ ՌԴ շահերն այս պահին, այս հարցում համընկնում են թուրք-ադրբեջանական տանդեմի հետ և փաստացի այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» կիրառմանը դեմ են Հայաստանն ու Իրանը, այս պատճատով է, որ Իրանին կոչում ենք բնական դաշնակից: «Զանգեզուրի միջանցքին» Իրանի դիմադրությանը վերջերս անդրադարձավ նաև Էրդողանը նշելով, որ «Հիմնական

---

[48] One of the causes of discord and enmity is the usurping Zionist regime, The Office of the Supreme Leader, 19 /Jul/ 2022, https://www.leader.ir/en/content/25923/The-Leader-of-the-Islamic-Revolution-in-a-meeting-with-the-President-of-Turkey.

[49] The Americans in Syria should be withdrawn from the east of the Euphrates River, The Office of the Supreme Leader, 19 /Jul/ 2022, https://www.leader.ir/en/content/25922/The-Leader-of-the-Islamic-Revolution-in-a-meeting-with-the-President-of-Russia.

դիմադրողն Իրանն է և Թուրքիան կշարունակի աշխատել միջանցքի բացման ուղղությամբ»[50]:

Ուշագրավ է, որ միջանցքի բացման իր նպատակներին դիվանագիտական ճանապարհով չհասնելուց հետո, Ադրբեջանը Թուրքիայի և ըստ էության՝ Իսրայելի աջակցությամբ փորձեց հարցը լուծել ռազմական ճանապարհով 2022 թ. սեպտեմբերին: Այս անգամ ՀՀ ԶՈՒ արժանի դիմադրություն ցուցաբերեցին և հայ զինվորի սեփական կյանքի հաշվին՝ կանգնեցրին ադրբեջանցիների շարժը: Դրանից զատ, ՀՀ ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանի՝ «Ալ-Մոնիտորին» տված հարցազրույցից պարզ է դառնում, որ Իրանը ևս կանխարգելիչ գործողություններ է իրականացրել այս հարցում: Նա մասնավորապես նշել է «Մենք հետախուզական տեղեկություններ ունենիք, որ սեպտեմբերյան մարտերի ընթացքում Ադրբեջանը շատ ավելի մեծ հարձակում էր նախապատրաստում: Իրանի գործողություններն ու հայտարարությունները, սակայն, նպաստեցին, որ իրադրության հետագա վատթարացումը դադարի»[51]:

Սրանից զատ, առկա տեղեկատվության համաձայն՝ Միացյալ Նահանգները ևս ճնշում է գործադրել Ադրբեջանի վրա՝ շարժը անհապաղ դադարեցնելու ուղղությամբ, և ինչպես տեսնում ենք նաև ԱՄՆ-ից եկող ուղերձները ևս չեն աջակցում Ադրբեջանի՝ Հայաստանի տարածքով

---

[50] Opening of Zangezur corridor is issue with Iran, not with Armenia, Turkish President Erdogan, https://twitter.com/anadoluagency/status/1668921484641812484?fbclid=IwAR14XqpytxjaMbg3giToeIEZqIJ-L9IlHbMyGCXbdoyzhezh4-yEP4I9uS4.

[51] A. Zaman, Turkey rises, Russia fades as Iran and Azerbaijan clash over Armenia, January 31, 2023, https://www.al-monitor.com/originals/2023/01/turkey-rises-russia-fades-iran-and-azerbaijan-clash-over-armenia.

ճանապարհ ունենալու գաղափարին: Ակնհայտ է, որ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը ստացել է Արևմուտքից երաշխիքներ 29 800 կմ² անքակտելության վերաբերյալ, ինչի մասին վերջին շրջանում վարչապետը բազմիցս նշել է, թե սա է մեր տարածքը և այլ հավակնությունն չունենք:

Սակայն խիստ ուշագրավ էր 2023 թ. փետրվարին մեր ռազմավարական դաշնակցի արտգործնախարար Լավրովի հայտարարությունը, առ այն, որ «Երկար տարիներ Հայաստանն օկուպացրել է Ադրբեջանի 7 շրջանները»[52]: Սույն հայտարարությունն այնքանով է տարօրինակ, որ անգամ ՄԱԿ-ի ԱԽ իր բանաձևերում երբեք չի արձանագրվել, թե Հայաստանն է օկուպացրել, այլ կոչ է արվել հայկական ուժերին դուրս գալ Ադրբեջանի տարածքներից: Ստացվում է, որ մեր ռազմավարական դաշնակիցը հող է նախապատրաստում Ադրբեջանի համար նույն կերպ վարվել Սյունիքում՝ ունենալով նույն արդարացումը: Սա ակնհայտ Իրանի հետ կարմիր գծի խախտման, Արևմուտքի երաշխիքների խախտում է արձանագրում: Սա նշանակում է, որ հասունանում է մի խնդիր, որի լուծումը կարող է լինել կամ Արևմուտքի ու ՌԴ համագործակցությամբ ու լարվածության թուլացմամբ կամ ռազմական ճանապարհով, որի թատերաբեմ ցավոք սրտի կլինի Հայաստանի հարավը՝ Իրանի հյուսիսային սահմանները: Սրանով էր թերևս պայմանավորված Իրանի 2022 թ. հոկտեմբերին Արաքս գետի մոտ զորավարժությունների անցկացումը, որով իրանական արագ արձագանքման ջոկատները հեշտությամբ հատում էին

[52] Лавров: Армения много лет оккупировала земли Азербайджана, но он их вернул, 2 Февр. 2023, https://info24.ru/news/lavrov-armeniya-mnogo-let-okkupirovala-zemli-azerbajdzhana-no-on-ih-vernul.html.

Արաքս գետը[53], որի այդ հատվածը գտնվում է Իրանի տարածքում: Ադրբեջանում մտահոգություն հայտնեցին Իրանի զորավարժության նկատմամբ:

Իրանի իշխանությունները դատապարտեցին դեսպանատան վրա հարձակումը[54] և տեղեկացրեցին ադրբեջանական իշխանութուններին, որ այն տեղի է ունեցել կենցաղային հողի վրա, սակայն դա Ադրբեջանին պետք չէր: Ադրբեջանն ընդգծված կերպով նաև թույլ չտվեց Իրանի պատվո պահակախմբին իրականացնել Բաքվի օդանավակայանում դեսպանատան զոհված աշխատակցի դին տեղափոխելու արարողությունը:

Օրեր անց՝ հունվարի լույս 29-ին, իրանական պաշտոնական լրահոսի համաձայն տեղի ունեցավ Իրանի Սպահանի ռազմավարական օբյեկտի ռմբակոծում ԱԹՍ-ի միջոցով[55], տարածվեցին տեղեկություններ, որ Իրանի հյուսիսային նահանգներում էլ մեծ հրդեհ է բռնկվել, որը Իրանի ոչ պաշտոնական լրահոսը կապեց մեկ այլ թիրախավորման հետ: Իրանի իշխանությունները շատ արագ արձագանքեցին նշելով, որ տեղեկացված են, թե, որ երկրներից են եկել ԱԹՍ-ները՝ կոչ անելով նաև հարևան

---

[53] J. Kucera, Iran's military starts "massive" drills on Azerbaijani border, Oct 20, 2022, https://eurasianet.org/irans-military-starts-massive-drills-on-azerbaijani-border.

[54] Iran strongly condemns armed attack on Azerbaijan Embassy in Tehran, Jan 27, 2023, https://en.irna.ir/news/85010963/Iran-strongly-condemns-armed-attack-on-Azerbaijan-Embassy-in.

[55] Iran Defense Ministry: Air defenses repel drone attack on military workshop in central city of Isfahan, 29 January 2023, https://www.presstv.ir/Detail/2023/01/29/697167/Iran-repels-micro-aerial-vehicle-attack-Isfahan?fbclid=IwAR2tp_7g6dI6QFWnRdNGqoztGbPB8b6pu7WtbrVwfly2aqmikqA54bZj63s.

երկրներին չհամագործակցել Իսրայելի հետ: The Wall Street Journal-ն էլ հաստատեց, որ Իսրայելը հարձակում է գործել իրանական օբյեկտների վրա[56]: Սա շատ տարօրինակ էր, հատկապես հաշվի առնելով, որ օրեր առաջ տեղի էր ունեցել Իրանում Ադրբեջանի դեսպանատան վրա հարձակում, և Ադրբեջանն էլ ամբողջովին դուրս էր բերել Թեհրանից դիվանագիտական կորպուսը, թեպետ Թավրիզում շարունակում էր գործել հյուպատոսությունը:

Ուշագրավ էր նաև ԻԻՀ նախագահի ուղերձը ժողովրդին 2023 թ. փետրվարի 1-ին, որտեղ, ըստ էության նա ընդհանրապես չանդրադարձավ վերոհիշյալ հարձակմանը, խոսեց միայն ներքաղաքական տնտեսական վիճակների մասին: Այսպիսով՝ ևս մեկ անգամ արձանագրելով, որ դրանք ոչ կարևոր հարձակումներ են եղել: Սակայն, ըստ իս, սա կարևոր ուղերձ էր Իրանին, որին վերջինս խիստ հավասարակշռված արձագանքեց:

Այսպիսով՝ արձանագրենք, որ տարածաշրջանը նմանվում է իրական եռացող կաթսայի և Իրանը տարածաշրջանային միակ երկիրն է, որ ամեն ջանք ներդնում է կայունություն ապահովելու և իր ու Հայաստանի սահմաններն անքակտելի պահելու ուղղությամբ: Սակայն ՀՀ հարավային սահմանների անվտանգությունը պահելու համար, ըստ էության՝ անհրաժեշտություն է նկատվում ռազմավարական նոր դաշինքի կնքման՝ Իրանի հետ: Այս մասին հարցազրույց ենք տվել «Ալ-Մոնիտորի» թղթակցին, նշելով, որ այս պահին «Հայաստանն ավելի լավ է ընկնի

[56] Israel Strikes Iran Amid International Push to Contain Tehran, Jan. 29, 2023, https://www.wsj.com/articles/israel-strikes-iran-amid-new-international-push-to-contain-tehran-11675004979?fbclid=IwAR2TfXzocXeo-iymEJBSXZo7-cY2GmJUoZ3wY1eYblZXc4Zirjb4DHIfueM.

ԱՄՆ-ի պատժամիջոցների տակ, քան մի ողջ ժողովուրդ բնաջնջվի իր բնօրրանում»[57]:

Եզրակացություն

Հարկ է նշել, որ Արցախյան վերջին պատերազմը և Հայաստանի շուրջ առաջացած ծանր իրավիճակը ցույց տվեց, որ Խորհրդային Միության փլուզումից հետո, առկա խնդիրներն ու մարտահրավերները ոչ միայն չեն հաղթահարվել, այլ դրանց ավելացել են նորերը և այսօր Հայաստանը վճարում է նաև իր ընտրած քաղաքական կուրսի համար:

Հայաստանը, որը փորձել է կոմպլեմենտար քաղաքականություն իրականացնել թե հավաքական Արևմուտքի, թե ՌԴ-ի հետ, այնուամենայնիվ չկարողացավ ամբողջովին չեզոք լինել: Որքան էլ, որ Հայաստանի իշխանությունները հմտորեն բացատրում էին Արևմտյան աշխարհին, որ ՌԴ-ի ու Իրանի հետ կապը Հայաստանին անհրաժեշտ է բացառապես սեփական ազգային անվտանգության պահպանման բաղադրիչից ելնելով, այնուամենայնիվ, առաջին իսկ նմանատիպ խնդրի ժամանակ հավաքական Արևմուտքն էլ Հայաստանին թողեց իր նախընտրած «անվտանգային կոմպոնենտներ» երաշխավորող երկրների հետ, որոնք ըստ էության՝ ի վիճակի չեղան ամբողջովին իրականացնել իրենց գործառույթները: Օր օրի մեծանում է Իրանի նկատմամբ հավաքական Արևմուտքի ճնշումները, իսկ ՌԴ 2022 թ. փետրվարից ի վեր

---

[57] A. Zaman, Turkey rises, Russia fades as Iran and Azerbaijan clash over Armenia, January 31, 2023, https://www.al-monitor.com/originals/2023/01/turkey-rises-russia-fades-iran-and-azerbaijan-clash-over-armenia.

գտնվում է պատերազմի մեջ նույն հավաքական Արևմուտքի հետ: Այս համատեքստում ուշագրավ է, որ Իրանում վերջերս քննարկման նյութ է դառնում Միացյալ Նահանգների հետ որոշակի բանակցություններ սկսելու թեզերը: Այդ մասին խոսեցին Իրանի նախկին արտգործնախարարներ Ալի Աքբար Սալեհին և Մոհամեդ Ջավադ Զարիֆը: Սալեհին նշել է, որ Իրանը պետք է սկսի ԱՄՆ-ի հետ քաղաքական երկխոսություն, թեպետ նախկինում էլ ունեցել են որոշակի քննարկումներ Իրաքի և Աֆղանստանի վերաբերյալ, բայց այսօր տարածաշրջանային նոր իրողությունների համատեքստում անհրաժեշտ է մեծացնել քննարկման շրջանակը[58]: Զարիֆն էլ իր հարցազրույցներից մեկում վերջերս խոսել էր, որ «Իրանի համար վտանգավոր է լինել հակառուսական կամ հակաամերիկյան: Որովհետև մենք պետք է առաջնահերթություն տանք մեր ազգային շահերին և հետո մտածենք ամերիկյան գերիշխանության դեմ հակազդեցության մասին»[59]: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Իրանում ևս լավ պատկերացնելով տարածաշրջանում տեղի ունեցող լրջագույն փոփոխությունները գտնում են, որ իրենք ևս պետք է քննարկման թեմաներ դարձնեն նախկին գործիքակազմի փոփոխության և Միացյալ Նահանգների, ԵՄ-ի հետ նոր որակի քննարկումներ սկսելու, ժամանակավոր նոր դաշինքներ կնքելու հարցերը:

---

58 وزیر خارجه پیشین ایران از ضرورت «تنظیم رابطه با آمریکا» و توصیه روسیه و چین در این باره گفت, https://www.bbc.com/persian/articles/c72e44xvy1do?.

59 ظریف: ضد روس و ضد امریکا بودن برای ایران خطرناک است / تهران فکر می‌کند روسیه می‌تواند متحدش باشد / اشتباه محاسباتی در دوران گذار باعث نابودی می‌شود, ۲۱ تیر , ۱۴۰۲ , http://bitly.ws/S7Qb.

Այսպիսով, որքան էլ որ ԱՄՆ-ից կամ ԵՄ-ից Հայաստանը ստանում է գոտեպնդող կոչեր, այնուամենայնիվ դրանք կոչերից անդին չեն լինելու, քանզի Հայաստանը վճարում է նաև իր քաղաքական ուղղությունների համար, չունենալով երբեք արժանապատիվ այլընտրանք: Հղում անելով Զարիֆի թեզերին՝ վստահ ենք, որ Հայաստանը ևս այսօր կանգնած է նոր գործընկերներ հայթայթելու, ռազմավարական նոր դաշինքներ կնքելու խաչմերուկին, քանզի նախկին աշխարհակարգը այս պահին չի կարողանում լավագույնս իրացնել իր առաքելությունը: Կարծում եմ, որ Հայաստանի համար այսօր խիստ կարևոր է խորը և համապարփակ քննարկումներ սկսել ռազմավարական նոր բնույթի պայմանագրերի մշակման ուղղությամբ Իրանի, Հնդկաստանի և Ֆրանսիայի հետ, միևնույն ժամանակ փորձելով պահպանել նախկին բոլոր ունեցած պայմանավորվածությունները ուժի մեջ:

GOHAR ISKANDARYAN,
PhD., Associate professor,
The Head of the Department of Iranian Studies,
Institute of Oriental Studies, National Academy
of Sciences of the Republic of Armenia,
E-mail: iskandaryan@sci.am

APPROACHES OF ARMENIA AND IRAN TO THE NEW REGIONAL CHALLENGES

The last Artsakh war and the difficult situation around Armenia showed that after the collapse of the Soviet Union, the existing problems and challenges were not only not overcome, but new ones were added to them.

The work presents Israel's military support to Azerbaijan during the 44-day war, which, according to the author, was carried out mainly due to Israel's insatiable desire to get closer to Iran's borders. From the available facts, the author comes to the conclusion that Israel has succeeded in this, which resulted in the severe tension between Azerbaijan and Iran during the recent period.

Throughout the 44-day war, Iran tried to maintain the balance, but at the same time, its main task was to maintain its positions in the South Caucasus. The activation of Iranian diplomacy after the war is also noteworthy. Tehran tried to participate in the newly emerging situation with various proposals.

After the war, it was obvious that Turkey's influence in the South Caucasus would increase even more, and also mercenaries and for the first time representatives of the Israeli intelligence service were brought to the region by Azerbaijan, which

contradicts the security of the Iranian national, which he has spoken about several times.

Even in Iran, having a good idea of the serious changes taking place in the region, they believe that they should also make the issues of changing the previous toolset and starting new quality discussions with the United States and the EU, concluding new temporary alliances a topic of discussion.